

նաեւ սոսկ քաղաքացւոյն սեղանին վրայ, ուսկից յետոյ թուրք ազգեցութիւնը վրտարած լինի:

Պնակ: Առաջինն էր կերակրի անօթոց մէջ, բախտաւոր զիպուածով մը Ս. Սահակայ կանոններէն յիշուած զրգալին հետ, «մինչեւ ցպնակ եւ ցորգալ» (112), որպէս զի անաշխատ հասկանանք՝ թէ սա զըլխաւորապէս ապուրի յատուկ էր այն ժամանակէն: Նոյն էր եւ նոյն բառով թարգմանուած է նաեւ յն. πίνωξ (Ղկ. ԺԱ, 39: Ոսկ. Թղթ. Ա, 230), որոյ ձեւն էր բուրջի՝ գոգաւոր ու տափարակ, առանց խոտոր շրթներու, խեցեղէն կամ մետաղեայ, եւ սահմանուած նաեւ մսեղէն կերակրոց (Դար. Ա, 971-2): Խորենացին արդարեւ նոյն նկարագիրը կը դնէ հետեւեալ բացատրութեան մէջ. «պնակաձեւ փոսել ըզմէջսն» սահմանաքարից (134):

Սկառառակ: Ս. Գրոց մէջ կը հանդիպի չորս յոյն բառերու¹, եւ առաւելապէս τρυβλίονի², որ բառագրոց մէջ հոմանիշ կը համարուի նախորդին (Շենկէ, Աղեքս.), եւ յատուկ համեմատառն մսեղինաց (Դար. Դ, 337): Բայց մեր երկու բառերն ան-

1. Նեեմ. Է, 70. Բ եզր, Ա, 10. Մթ. ԻԳ, 25.

2. Գ Թագ. Է, 50. Մթ. ԻԶ, 23. Մրկ. ԺԴ, 20.